

Թիւնը, Սակայն և այնպէս պէտք է համաձայնել որ հաւանա-
կանութիւնը միանգամայն այն դրութեան կողմն է որ հաստա-
տում է թէ Պետրոս առաքեալը երբէք Հռոմ եկած չէ, և բո-
լորովին հակառակ է այն դրութեանը որ հակառակն է պըն-
դում: Երբ տեսնում ենք թէ որպիսի արագութեամբ են կող-
մելում առասպելները, մանաւանդ հաւատի ազդեցութեան
հերքոյ, մի աւանդութիւն, որ վերաբերում է ամէնից ուշ 67
թուին կատարուած իրողութիւններին, և որի առաջին հետքը
գտնվում է լոկ հետեւեալ դարի երկրորդ քառորդում, մեծ
յարգ չէ կարող ունենալ պատմութեան առաջ, Բնական է սա-
կայն որ այն օրից երբ Հռոմի եպիսկոպոսները սկսան գահերի-
ցութեան ետեւից լինել և իրանց Եկեղեցուէն մի նախապատ-
ուութիւն սեպհականել միւս եկեղեցիների վրայ, որ համապա-
տասխանում էր իրանց նստած քաղաքի նախապատուութեանը
աշխարհի միւս քաղաքների վրայ, բնական է, ասում ենք, որ
նոքա կամենային իրանց Եկեղեցին նախնական Եկեղեցու երկու
ամենափառաւոր անունների հովանաւորութեանը տակ դնել,
և ներկայանալ աշխարհին միանգամայն իբրեւ Պետրոսի և Պօ-
ղոսի յաջորդներ: Երբ միանգամ Պետրոսի և Պօղոսի միա-
ժամանակ Հռոմում բնակելու և միեւնոյն հալածանքով մեռ-
նելու աւանդութիւնը հաւատացեալների կողմից ընդունե-
լութիւն գտաւ Հռոմի գահակալները ամէն ջանք արին այդ
հաւատը իրանց ձեռքերով ոռոգելու, աճեցնելու և պողա-
բեր անելու:

Ահեկի Ժ. և Ապրիլ Ժէ, յերիցս երանեալ հայրն մեր ի սուրբ
Հայրապետն Յովհան Ուննացին: Յայտարարութիւն բանից ի
նուաստէ Վարդանայ. ի խնդրոյ տեսուն Համազասպայ Արհի Ե-
պիսկոպոսի մեծի Աթոռոյն Հաղատայ առ որ սկիզբն նախա-
դրութեան ճառիս պատասխանի է:

Պայծառ ջահն Արեւելից Եկեղեցեացս. այրն քրիստոսազգեաց
Գրիգորիոս, բնախօսել կամելով զբորբորումն աստեղածե ցոլ-
մանցդ՝ որ գործի յաճախ ի յօդ այդր. ոչ այլ ինչ ասաց պատ-

ճառ, քան թէ, հոգմն վերնաշարժ ասէ. անցանէ ի ներքո թանձր և ցուրտ օդոյ, որ լինի մերձ առ երկիր և ջուր, եւ նիդ եգեալ տանի շփէ ընդ յատակ և ջերմ օդոյ մերձ յարփին, և յայնմանէ ճապաղին փայլատակմունք լուսոյ, զոր կոչեմք աստեղս թռուցեալ: Որպէս և ձեւի՞ հարկեցոյց զմիտս մեր հոծ և ցրտացեալ. փութայ առ երկին ձգել ի մաքուրն տեղի, առ ի գոյացութիւն աստղանշոյլ բանից որով բերկրին մանկունք Սիօնի սրբոյ: Որպէս և դու իսկ սոյնոր ես վեհագոյն գլուխ վսեմական տանգ Հաղբատայ, յերեւանի գոլով յԱշխարհի: Քանզի չորրորդ մեզ այս գործառնութիւն եգեալ ի ձէնջ, Յետ խօսելոյն յամենասուրբ Աստուածածինն, որ փառաւորի ի սուրբ ուխտն Հառիժա: Եւ ի Լուսաւորիչն մեր Գրիգոր: Եւ ի սուրբ զաւակս Նորայ, ապա և ի յերկրորդ լուսաւորիչն և ի հաստողն հիման հաւատոյ յերջանիկն Յովհաննէս, պատրիարքն մեծ և ի նախահայրն հայոց մեծաց: Հրամայեցիք՝ դնել բանս ինչ դրուատից. զի զփառաւորիչն Աստուծոյ և զփառաւորեալն ի նմանէ մեծադրեսցուք տօնիւ: Քանզի որ չարչարանացն Քրիստոսի կցորդ և ի յերկինս փառացն հաղորդ ընդ առաւել օուրբան: Պատշաճ է և ի վերայ երկրի տալ նմա զպարտական պատիւն ըստ կարի ընդ ամենայն սուրբան, մեզ ի յօգուտ և ոչ թէ նմա յաւելուած ինչ բարեաց, որ լիով ունի զիւրն յԱստուծոյ: Սակայն մեք յազաչեցաք զջանն ձեր յովով անգամ պահանջելով՝ երեսօք և պատուիրանաւ, ի գիր և ի բան յազազս երկու պատճառաց, մի վասն երկիւղի տկար զմեզ գիտելով և անարժան և երկրորդ զի ոչ տեսաք գրով աւանդեալ ըստ կարգի զծնունդն և զսնունդն, և զքաղաքավարութիւն և զգործս առաքինութեան Նորայ: Եթէ որպիսիք էին որք ածին հասուցին զնա յայնքան բարձրութիւն փառաց. մինչ զի լինիլ կաթողիկոս Հայոց մեծաց:

Եւ այսպիսի գործ վճարել որ ոչ է վերջնոցս քան թէ առաջնոցն որք յորովայնէ ընտրեցան և ի Տեառնէ կոչեցան. և ի նմանէ առեալ իշխանութիւն զօրացան ի վերայ ամենայն հակառակամարտ պատերազմողաց: Վասնորոյ առաքեցաք ի գեղն և ի սահմանսն ուստի ասի նա, երկիցս անգամ հարցանել, և ոչ ինչ աւելի գտաք զրոյցս քան զոր տեղեկացեալ էաք յառաջագոյն ի գրոց կամ ի լրոյ, յետ որոյ քաջալերեալ վստահացաք ի հոգին

ուսուրբ որ ի թիկունս հասանէ տկարութեան մերոյ, և ի շնորհն որ զնայն պսակեաց, զի և զմեզ արասցէ ազատ ի պարտուցդ ձեր, Քանղի Նոյ և Յոր, և Դանիէլ, և այլք ի սրբոցն, ոչ ազգաբանին յարենէ ծննդոցն և ի նախահարց զոր գիշերք և հեշտութիւնք շնորհեն՝ այլ յառաքինութենէ անձանց և ոչ բովանդակ վարք և գործեցեալ սքանչելիք սրբոցն գրեցան որպէս և ոչ Քրիստոսին։ Ուստի և մեզ բաւական համարելի է ըզսակաւսն ի բազմաց զոր ունին գիրք յիշատակարանաց, և զլուրն դիպողական յաւանդութեանց, և անտի կազմեցաք բարեբաղդ առաքաւտի մեծին Յովհաննու հիւսաք պսակի. որպէս ասէ քաջն Պիղոքոս իբրեւ զփռնջ մի վարդի ընկենլով զայն ի գոգս կաթուղիկէ եկեղեցւոյ, ի փառս անմահ փեսային Աստուծոյ մերոյ Յիսուսի։ Արդ հայրն մեր աստուածապարզ և հայրապետն փառազգեաց Յովհաննէս էր որպէս գիրք պատմագրաց ցուցանեն։ Աշխարհաւ երկոտասաներորդ ի Գուգարաց, գաւառաւ չորրորդ ի Տաշրոյ, բնակութեամբ ի նշանաւոր գիւղաքաղաքէն Ուննայ, ի յարենէ ծննդեան յազատ տանէ։ Քաջարոյս գոլով մանուկ և ուշիմ ի վարժս կրթութեան, հռետորական ուսման և փիլիսոփայական արհեստից պարապեալ, զտիս տղայութեան անյուցանէր առ հանճարեղս, քանզի գոյր յայնժամ այսպիսի ուսման դպրոցք յաշխարհիս, Հայոց, և Յունաց, և Ասորոց ճարտարաց, յաղագս որոյ առեալ և զիմաստասիրական անունն կոչմամբ և արդեամբ զարդարեալ ամենայն առաքինութեամբ։ Երթայր այնուհետեւ եռանդնոտ բնութեամբն ի շարժմանէ հոգւոյն, առ մեծ ճգնաւորն և անուանի վարդապետն Թէոդորոս, Քութնաւորն կոչեցեալ, որոյ գտանին ասացեալ ճառք ներբողականք ի ծնունդն Քրիստոսի և ի խաչն աստուածընկալ, խորագոյն մտօք և դժուարիմաց բառիւք պաճուճեալ. զորոյ սիրեցեալ զվարս սուրբս, խոշորս, և պարկեշտս, յանձն առնոյր յաւելսւածով։ Ընդորում և զխորքն դարգճաճեւ զգենոյր ծածկապէս մինչև ցկատարումն կենաց իւրոց։ Ուսանէր ի նմանէ ըստ հաճոյ կարգին զամենայն գիրս Աստուածաշունչս հին և նոր մատենից. որովք ընդարձակեալ սրտիւ աճէր խրատամբեր վարուք և հանճարով գրոց փառաւորեալ յԱստուծոյ և ի մարդկանէ։

Քանզի տեսիլք նախադիտութեան և շնորհք բժշկութեան

տուեալ լինէր նմա ի վերուստ: Զոր տեսեալ Հայրն նորա ըստ Հոգւոյ տայր նմա կոչել զնա յաստիճանս շնորհարաշխութեան. ի կատարման Հոգեւորական և մարմնական հաճակին և մօրուաց ի կարգ սարկաւազութեան և ի պատիւ քահանայութեան, որովք և աղբիւրանայր յորդառատ իմաստութեամբ, և թարգմանութեամբ և մեկնութեամբ գրոց զարդարէր զեկեղեցի և ժիր և մաքուր քահանայագործութեամբ հաշտեցուցանէր զԱստուած ընդ կենդանիս և ընդ մեռեալս: Քանզի թէպէտ և թագաւոր ոչ գոյր աշխարհիս հայոց յայնմ ժամանակի, այլ ընդ ծառայութեամբ տաճկաց էին, որ կոչին Ամեր Մեմնիք, սակայն ի գթութիւնս եղ Տէրն զազգս առաջի նոցա, աղօթիւք սրբասիրին Յովհաննու, և որք ընդ նմա զկամս Աստուծոյ կատարէին ուղղափառ հաւատով և խաչաչարչար ճգնութեամբ առ լերամբըն որ Սոթից կոչի. Գէորգ վարդապետն սքանչեւագործ, և Մաթէոս խոտաճարակն և իւր իսկ վարդապետն և այլ բազում խոտակրօնք և երկնաթռիչք: Վասնորոյ և ի յանցանելն ընդ հասակս երիտասարդութեան իբրեւ ծաղկեցին նորա ալիք և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն աշխարհս, և փոխեցաւ ի Քրիստոս սուրբ կաթողիկոսն եղիա: Ի յազգմանէ խնամոցն Աստուծոյ շարժեցան սիրտք բոլորից Հայաստանեայց եկեղեցակաւնաց և աշխարհականաց, զՅովհաննէս զնել յաթոռ Առաքելական, զերկրորդն ոսկեբերան, զհեղին Հոգւով, զբարձրն բանիւ հանճարոյ, զամբիժն աղաւնի, զճշմարիտն առաքինի, զմեկնեալն յամենայն իրաց չարաց. զՅովհաննէս զազնուականն քան զամենայն արեւելիայս: Որեւ զգեղեցկութիւն Հոգւոյն նկարագրէր, գեղաղէշ տեսակ մարմնոյն, զարդարեալ ի հասակ վայելուչ ի չափակցութիւն անդամոց, ի պայծառութիւն բրեսաց, ի գոյն կարմիր և սպիտակ վարդից, ի շուք շնորհի և ի փառազարդ մօրուօք: Դեղձան, խարտեաշ և աղբեկ երեւմամբ: Անթերի, լի և կատարեալ մասամբք բարեաց, զոր Աստուած և մարդիկ խնդրեն, ներքոյ և արտաքոյ. զոր և յովով թախանձանօք հարկեն զամենեւրջանիկ Յովհան, և նստուցանեն յաթոռ սրբոյն Գրիգորի ի կոչմանէ Հոգւոյն, մեծաւ հանդիսիւ և աշխարհաւիկոյս բազմութեամբ: Որոց տեսեալ զշնորհն երկնաւոր հանգուցեալ ի նա և ինքեանք զմայլեալք ի Հոգւոյն և բերկրեալք երեսօք, վկայէին որպէս ի միոջէ բերանոյ, եթէ միաբանեցաւ

ընդ նմա օժումն սրբութեան և պարգեւքն վերին: Եւ օրհնեալք ի յօժեալ աջոյն, գնացին խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս: Իսկ Հայրն առաքելական զառաքելականն առեալ շնորհս աստիճանի, զառաքելականն յանձն առնոյր զվաստակ և զուղեգնացութիւն, ցուցանէր զինքն ըստ աշխարհի և գաւառաց գաւառաց և քաղաքաց ուրև կարէր ժամանել. հաստատէր զխախտեալսն ի հաւատոց և ի գործոց, քաղէր զփուռն յանցանաց, ի բաց առնոյր զխոշ և զխուլ, և զքարինս այլանդակ բանից և իրաց: Սերմանէր զցորեանն սուրբ, խշտէր զգաղձն բուսեալ յայգւոջն տնկեալ ի Թադէոսէ և ի Բարթողիմէ: Զմշակեալն ի Հօրէ, և ուռգեալ ի Գրիգորէ, ցանկէր զխրամատեալ տեղիսն. կառուցանէր զանկեալ քարինս յամուր աշտարակէն, վերակացուս յօրինէր. հովիւս կացուցանէր, խնամակալս և տեսուչս հառոտտէր, զգուշանալ հօտին Տեառն զորս գնեաց ընդ մեծագնի արեանն Աստուածայնոյ, Բանեղէն և ձեռագործ փարախաւ հաւաքել միշտ, յարօտս և ի ջուրս հանել և հանգուցանել: Շինէր և ինքն ի բազում տեղիս եկեղեցիս որպէս և յիւրականն աւանի զերկնանմանն խորան, բարի առնելով տանն իւրոյ և ընտանեաց, որպէս դայեկաց և առաջին խանձարաց, զի նախ ի պտղոյն վայելեսցեն աշխատեալքն ի նա, և յորժամ մերձ գային հրաշափառ տօնքն Տէրունական. Աստուածյայտութեան և Յարութեան, և Պէնտէկոստէին և Վարդապետին, և տիրամօրն և սրբոյ խաչին, յերևելի տեղիս երթեալ, ժողովոր առինքն զիշխանս աշխարհացն՝ աշխարհախումբ բազմութեամբ, և նոքօք կատարէր զլուսաբեր աւուրսն, զարդարելով զգեղեցկադիտակ հասակն հայրապետական զգեստիւք ի խընդութեան աւուրսն առ ի ցնծութիւն և ի պարծանս փառաց տօնասէր և Քրիստոսասէր ժողովրդեանն, ուր և հաւաքէին ևս ի տաճիկ տոհմէ բազումք, ի յաւաք տրանց և ի զօրագլխոց որք և զարմացեալ հիանային եղեալ ձեռն ի ծնօտի, երանի տալով աշխարհին, որ այսպիսի ունիցի առաջնորդ: Որք և գնացեալ առ աշխարհակալ սուլթանն Օմար, գովէին առնա զայրն փառաւոր, որպէս թէ չէ տեսեալ ակն մարդոյ, այնպիսի գեղեցիկ որդի յԱղամայն տոհմէ: Եւ նորա լուեալ և ցանկացեալ տեսեալն սրբոյն առաքէ ողորական բանիւ և գրով ի ձեռն գործակալաց դրան իւրոյ զի աշխատ լիցի և ցուցցէ նմա զինքն, և

առցէ ի նմանէ զբոլոր օգուտ աշխարհին իւրոյ զոր ինչ և խնդ-
րեսցէ զոր և արարն իսկ անյայազ փութով որպէս Տէրն ի խաչ,
և լուսաւորիչն մեր ի մէջ օձիցն և նա ի մէջ թշնամեացն օձա-
բարոյ և չարչարիչ նենգաւոր ազգին խմայելի, զանձն եգեալ ի
վերայ հօտին իբրև զհովիւն քաջ:

Իսկ իբրև լուաւ թագաւորն զերթն մեծի քահանայապետին՝
առաքեաց նմա ընդ յառաջ, և աղաչեաց զի այնպէս երևեսցի
նմա, որպէս և ի տօնի աւուրքն յիւրում՝ եկեղեցւոյն, և զայն
ևս կատարէր առանձնացեալ իւրայնովին, զգենոյր զպճղնա-
ւորն և ի վերայ զվակաս եմիփորոնին, և զքողն ձիւնափայլ
վարսակալ պսակովն դնէր ի գլուխն և մտանէր յարքունիսն,
զինեալ խաչանշոյլ և ականակուռ գաւազանաւն, զոր իբրև
տեսանէր արքայն արքայից ահիւ և գողովթեամբ ընոյր, և քրտ-
մընեալ սոսկայր յոտից մինչ ցծայր հերացն, և ծածկեալ զերեսն
հազիւ կարէր պահել զուշ խելացն, առ ժամանակ մի լուսթիւն
կալեալ զպալատն արքունի, ապա սրտապնդեալ զինքն սուլ-
տանն բանայր զերեսն իւր և հարցանէր ասելով՝ եթէ Քրիստոս
քո և աշակերտքն իւր զայդ ոչ արարին, զի ի վերայ բնական
պեղեցկութեանդ և աստուածային շնորհացն ծագեցելոյ ի քեզ՝
յաւելուս պաճուճանաց գոյնս սակաւաժամանակայս այնքան
զի ոչ իշխեմք յառնել և համբուրել զքեզ: Ասէ ցնա սուրբ Հայ-
րապետն. Քրիստոսն իմ և աշակերտքն իւր նշանօք փայլէին և
մեք չուներով զայն այսու երևիմք պատկառելի տեսողաց և յեր-
կիւղ ռամկաց, և թէ գայթակղիս միայն տեսցես որպէս և իմս.
և նոյն ժամայն արտաքս հանեալ զամենեսեան, տեսանէր ի
ներքս զտատասկաձև գլգլեակն և անկեալ յերեսս ողջունէր
զնա, և շօշափմամբ ձեռաց գանձէր յինքն օրհնութիւն ի նմա-
նէ: Եւ հրաման տայր բերել առաջի նորա զամենայն նեղեալսն
որ ի զօրուն և ընկենուլ յոտս նորա, որ և բժշկեալք լինէին
շնորհօք հոգւոյն որ ի սուրբն Աստուծոյ և յուսով թագաւո-
րին, զի Աստուած փառաւորէ զփառաւորիչս իւր: Եւ տեսցեալ
թագաւորին՝ եթէ ահա որպէս լուաք վասն Քրիստոսի քո, և
վասն քո, տեսաք այսօր աչօք, և ահաւառիկ կամ ի հրամանս
քո իբրև զորդի զոր ինչ հաճոյ է քեզ: Եւ նորա խնդրեալ ի
նմանէ հանել ի վերին աշխարհէն հայոց որք եկեալ են ի յուռաց
ասէ և զրկեն զմեզ ըստ հոգւոյ ի հարցն աւանդից, և ըստ

մարմնոյ յերկրաւոր ժառանգութեանց: Իսկ նորա խնդութեամբ հրաման տուեալ և ձեռագորով կնքեալ և տուեալ զօրագլուխս յօգնականութիւն, և եօթն անգամ ագուցեալ զնա յարքունական և ի մեծածախ հանդերձից, առաքէ զնա յաշխարհս մեր երեւելի փառօք և բազում դրուատիւք պահեալ ի յաշխարհակալ գոռոզէն, որպէս զԶօրաբաբէլ ի Դարեհէ Պարսից արքայէ: Եւ զի յայնմ ժամանակի Սմբատ էր կիւրապաղատ աշխարհիս Հայոց, ի ձեռն նորա և զօրագլխին տաճկաց հանեալ լինէին յունականք իւրեանց կահիւք և կազմածովք յերկիրն ուստի եկեալ էին: Իսկ Տէրն Յովհաննէս տիրաբար խորհեցեալ առնէ ժողով ի Մանազկերտ գեղաքաղաքն հայոց եկեղեցականօք և ուղղափառ Ասորոց եպիսկոպոսօք ձկն թուականին և նզովեալ զԺողովն Քաղկեդոնի ընդ այլ հերձուածողսն, հաստատէ զուղղափառութիւն միաւորական դաւանութեան. Քրիստոսի Աստուծոյ անճառ մարդեղութեանն, մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն, մի անձնաւորութիւն, մի որդիութիւն, զի ողջ մնացէ մի Աստուածութիւն և մի բնութիւն յերիս անձինս ամենասուրբ Երրորդութեան. նոյնպէս և զոսկալի խորհուրդ պատարագին անխմոր և անջուր հաստատեր ըստ առաքելական սահմանադրութեան, և պաշտելոյն սրբոյն Գրիգորի և որդւոց իւրոց, մինչև ի պղտորումն Եզրայ անմրտութեան, քանզի թէպէտ ոչ բարձաւ բնաւին յազգէս ճշմարիտ կրօնք այլ ի տեղիս տեղիս թուլացեալ և լուծեալ էին զժամանակս ՂԲ. ամաց, վեցից կաթողիկոսաց կացելոց յեզրա մինչև ցտէրն Յօհան, և զի ոչ էին ամենեքեան քաղկեդոնիկք, յայտ անտի է որ մինն սուրբ Ներսէս է շինողն և սքանչելագործն որ ի գալ կայսերն Կոստանդիա բարկութեամբ աւերել զաշխարհս հաճ զնա ողորական բանիւք և հաղորդելով ընդ նմա վասն զգուշութեան հօտին, քանզի մատնեաց զնա դրան եպիսկոպոս մի. թէ նախ քան զերկու տարի ժողով արար և նզովեաց զԺողովն Քաղկեդոնի: Եւ ոմն սուրբ Սահակ է որ գնաց առ Մահմէտ և մեռաւ ի Խառան և սքանչելեօքն որ եղև ցածեաւ բարկութիւն բռնաւորին և ոչ եկն յերկիրս: Եւ վերջին կաթողիկոս տէր Եղիայ է որ չոգաւ յԱղուանս և զՆերսէս կաթողիկոս զԱղուանից զբակուրն կոչեցեալ և զտիկին աշխարհին որք էին քաղկեդոնիկք խայտառակ մահու գատապարտեաց

ձեռնտուութեամբ երկրին և սւղղափառ աթոռակալ եգեալ դարձաւ ի հայս. այլ սակայն երկնաւոր կենդանութեամբն սո- վաւ ողջացաւ հիւանդացեալ անդամք եկեղեցւոյ և բարձաւ միջնորմն որ և ի ժամ արձակման ժողովոյն ասէր երանելին հրապարակալուր, եթէ մի ոք համարեցի զմեզ մարգատեաց և անգէտ խորհրդեանն Գրիստոսի. որ զսէրն և զխաղաղու- թիւն եթող գանձ եկեղեցւոյ և պատկեր աշակերտութեան իւրոյ: Այլ քանզի ճեղքեն ոմանք ի հաւատոց և ի ներքոյ վայր մտանեն, և ասեն զբարին որ ի մեզ չար, և զլոյսն դնեն խա- ւար, և զմկրտեալսն ի մէջ կրկին մկրտելով. վերստին ի խաչ հանեն զՈրդին Աստուծոյ. և ասելով նոցա մեզ անհաւատս, ինքեանք անկանին ի հաւատոց, մեզ ինչ ոչ կարելով պակասու- ցուցանել: Զոր օրինակ թէ ոք զփոյթ և զսուր տեսողական կոյր ասէ ինքն է կոյր որ չէ ի տեսանել զնորա աչեղութիւն, զայնպիսին հալածեցաք մեք իբրեւ զօտարս. իսկ որ հաւատ ու- նին կատարեալ ի սուրբ Երրորդութիւն. և զԳրիստոս Աստուած խոստովանին միաւորութեամբ Բանին և մարմնոյն, և զմայրն Տեառն Աստուածածին, և յարութեան և դատաստանին ալին ունին, այնպիսիք հարք իմ են և մարք, քորք և եղբարք, ռե- տերք և դստերք, և եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ ի վե- րայ նոցա և մեք եղիցուք նոցունց բարեացն մասնակիցք. և արքայութեան հաղորդք:

Եւ զայս առացեալ արձակեաց զԺողովն և ինքն դառնայր քա- րողութեամբ Աւետարանին յայրարատ գաւառ:

Գայր ապա դեռագան ի կայսերէն Յունաց Լեոնէ՝ իշխան մի մեծ Վասիդ անուն, մեղադրական և սպառնալիաց գրով առ Տ. Յոհան: Եւ յետ տալոյ զգիրն հիւանդանայր զմահու ցաւն, և ոչ կորացին հնարս դեղոց գտանել յօղովութիւնք բժըշ- կաց. իսկ նորա յուսահատեալ ի կենաց և ի բժշկաց ապա- լինէր յաղօթս մեծի քահանայապետին, խոստանալով նմա եթէ ապրի այլ ոչ դառնայ առ կայսրն. այլ միայ առ նմա և պաշտէ զամբիժ հաւատս նորա: Իսկ սրբոյ առն Աստուծոյ ա- րարեալ աղօթս և եղեալ ձեռն ի վերայ՝ նոյնժամայն առողջա- նայր, և որպէս ի ձեռանէ Աստուծոյ զօրացեալ կանգնէր, փա- ռաւորելով զԱստուած և զճշմարիտ պատկերն իւր զՅովհան- նէս. և առեալ ի նմանէ կարգ կրօնաւորութեան առանձնանայր

յայրին որև անուամբ նորա կոչեցաւ Հոռոմի այր, և նա ունէր ընդ ինքեան զփրկաւէտ փայտն կենաց, մասն ի ճառագայթաւէտ լուսոյն աշխարհաց յաւաք խաչէն ներկեալ արեամբ Գուռինն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի, որ և կոչի այժմ Հոռոմ այրի սուրբ նշան և փայլէ սքեանչելեօք մեծամեծօք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Այլև սուրբն և հաւատարիմ ծառայն Աստուծոյ Յովհաննէս, շրջէր քրիստոսաբար և առաքելօրէն ցաւակցութեամբ մանրամասնաբար ընդ ամենայն տեղիս, ի նշանաւորս և յաննշանս անձանձիր ուղեգնացութեամբ հանդէս առնելով կորգաց և կրօնից, Նկեղեցեաց և պաշտաման, և քաղաքաւարութիւն վանականաց և անապատաւորաց, եպիսկոպոսաց և երիցանց արանց և կանանց, կուսից և երիտասարդաց, որք ի քաղաքս և յաւանս ի գեօղս և յագարակս, արոտքս հանէր զեկամուտ յաւելուածն. ընդդ զպակասեալսն, կանոնս հաստատէր, ճառս խրատականս յօրինէր, խօսէր զնոյնս և գրով արձանացուցանէր. մեկնութիւնս պարզ տեսութեամբ ժամակարգութեան և աղօթից սահմանէր գրով և բանիւ, դրուատս ներբողենից և բանս բերկրանաց յերեւելի տօնսն գրէր: Յովհաննէս մեծն մեծին ի ծնունդս կանանց համանունն նմանապէս անապատաստունն և գորշազգեստն, լեռնակոտն և խառնակեացն ընդ աշխարհի որ իբրև զնա իջեալ ի լերանց լուանայր զաղտեղութիւն մաքրաւորաց և մեղաւորաց. ջրովն որ խաղայ ի կեանսն յաւիտենից:

Խոնարհեցուցանէր զլերինս զհպարտութիւն մեծամեծաց. ընդդ զձորձս, յոյս դնելով բարեաց ի կարճմտութեամբ խոնարհեալսն. զգթուարինոն դիւրինս գործէր. այսինքն զկուսութիւն և զառանձնակեցութիւն, զպահս և զողորմութիւն, ըզհսկողութիւն գիշերոյ և զարտասուս. զթուփկալութիւն և զգետնախշտութիւն, որք զթուարազնաց թուին և առապարք, զորս դիւրին ցուցանէր քաղցրագոյն խոստման աւետեօք, պատրաստէր տեսառն ժողովուրդ կազմեալ, փարէր զամենեքումբ հայրենի գթութեամբ, դողայր ի վերայ ամենեցունց իբրև ի վերայ ուստերաց և դստերաց, Յաղագս որոյ և ի նետաձգութենէ չարին և յառաջին մախացողին, լցեալ ոմանց նախանձաբեկաց, բամբասեալ լինէր որպէս լուաք ի բազմաց յաւանդապահաց յիւրական գեղն. իոկ սուրբ այրն Աստուծոյ:

իրբե ետես թէ հաստատեցաւ, կառեաւ, արմատացաւ արձանացաւ գրով ամենայն եղեալքն ի նմանէ քարինքն շինուածոյ յառաջին հիմունն, և ուղացաւ խրամն խախտեալ, կրօնից և տօնից. որպէս և տօն Մենդեան և Յայտնութեան Տեառն եղեալն ի Յակովբայ և ի Կիւրղէ, որպէս և գրեալ է, թէ ի դեկտեմբերի քսան և հինգն յիշատակ է Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն, զոր յայլ քաղաքս ծնունդ առնեն, զոր սուրբն Յոհաննէս տօնեաց համաշխարհական հանդիսիւ, զկանոնեալն ի Կիւրղէ, զկնի նստն ամացն շփոթման, զղջացական երգով ասուցեալ, մեղաք յամենայնի և զպատուիրանս քո ոչ պահեցաք զնստն ամ, այլ խոստովանիմք առ քեզ, մի անտես առնեք այլ գթա ի մեզ Աստուած հարցն մերոց:

Նախատօնակ Տեառն Մենդեանն դնելով զչորս տօնն փոխանակ չորեքկերպեան Աթուռոյն, եօթն հովիւս կազմելով, ութերորդ վարուց մտրդկան, առաջնորդին Յիսուսին Աստուծոյ, Արդ գիտացեալ նորա եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է Աստուծով աջողեալ, և զայն ևս զմտաւ ածեալ թէ խօսեցան ըզնմանէ չարութիւն, և բան անօրէնութեան եգին ի վերայ նորա, ի շրջելն խառն ընդ մարդկան, պահելով առնէր այնուհետեւ զանձն խնայելով յինքն և յայլս, յիշէր զառաջին կեանսն երկնայինս և հրեշտակականս, զլուութիւն և զանապատաւութիւն:

Խոյս տար յանապատ տեղիս, ծածկէր զանձն ժամանակս ինչ ի Սոթիցն կոչեցեալ ճգնարան, և ապա ի ձիւնատանջ, սառնամանուտ բքաչարչար մռայլամած լեռուն Լեզուարա, ծախելով անդ ժամանակս ոչ սակաւ. մինչ գիտաց եթէ յուրք ի կարեցուորաց և ի կարօտելոց աշխատ լինին զցայգ և զցերեկ խնդրելով զնա, որ և ապա իջանէր յարեւելից կուսէ լերինն ի ծործորսն ձորակի միով մերձ ի յիւրականն աւան ի յուձուն, որպէս մեծն Հեղիաս ի Կարմեղոս լեռնէ. առ երաշտութեամբ ցամաքեալսն շինէր անդէն մատուռն մի պատարագի և նեղագոյն խրճիթս ոչ զոք թաղով բնակել ընդ իւր, քան թէ միով շատանայր պարկեշտագոյն մոնողոսիւ, համառօտ վճարելով զկարիս եկելոցն ի սահմանեալ աւուրս և ի ժամու: Զինքն Աստուծոյ միայն պարապեցուցանէր, խօսակցութեան և իմաստասիրութեան, պոհօք և ոքնութեամբ խաչեալ կալով առաջի Տեա-

ուրն և Աստուծոյ, զտիւ և զգիշեր, սակաւ ինչ ի թռչնոց զանազանեալ սակաւապետութեամբն, յանձն առեալ զմանկական խանձարուսն ճգնութիւն ի ծերունական հասակին անհոգ եղեալ ի հոգոց կաթոյիկոոութեան զի եղեալ էր նորին ընարութեամբ ի սուրբ Աթոռն զՏ. Դաւիթ, զլէւի Ժ. ամի նորա վաստակելոյն ի փրկութիւն հօսին և ի փառս Քրիստոսի Տեառն և Աստուծոյ, Որ է օրհնեալ յաւիտեան:

Յովհաննէս տէն արթուն որ բաց ունելով միշտ զայս և ի զգաստութիւն զականջսն սպասէր գալստեան տանուտեառն յերեկորեայ, ի մէջ գիշերի, ի հաւախօսի, ընդ առաւօտս. զի ի բաղխելն խնդութեամբ բացցէ, և ելցէ ընդ նմա ի հովտէ տրամութեանս յուխտեալն տեղի, որպէս խոստացաւ եթէ գամ և առնում զձեզ առիս, զի ուր են իցեմ և դուք ընդ իս լինիցիք:

Յովհաննէս ի հնգեոտասան Աշխարհաց Հայաստանեայցս երկոտասաներորդ և ի մասնէ գուգարացւոցն չորրորդ, և Զ, Ճ, և ԻԶ գաւառաց իշխեցող, և ԹՃ, գաւազանաց կաթսւորիչ, որ իբրեւ զհնգեոտասանօրեայ լուսին ամենաճառագայթ, երկոտասան աւաքելոցն համափառ վերնոյն Երուսաղէմի քաղաքական, որոյ են դրունք երկոտասան յողջոց մարգարոաց, խուժագուժ գուգարաց համեստացուցիչ, կատարելով զնոսա ի յառաքինութիւն չորից մասանց ի թիւ անմոլար հօտին իննսընիցն վերաբերին, հարիւրորդին կատարմամբ զինուորական հասակ արիութեամբ զինեալ զհայաստանեայցս վեցեկի շարժմամբ: Յովհաննէս գաւառաւ Տաշրացին, զոր արմայիս որդին արմանեկայ իւր Շարայի որդւոյ իւրոյ. և անուամբն նորա կոչեցաւ Շիրակ և Տաշեր: Երկիր պարարտ և բերրի որ ըստ Յունաց և Պարսից լեզուին, շիրն կաթին անունն է, որպէս լինի անդ. քան թէ այլ ուրեք, բազմութիւնք կթեղաց և յուլութիւնք կաթին: Ուր Յովհաննէս Դայեակն և դասախարակն տղայոց սիօնի, բազմայոց զկաթն բանին և մածուցանէր զսիրտ ամենեցուն մակարդով սիրոյ ամենասուրբ Երրորդութեան և դարձեալ Տաշիրն, այսինքն տաշեալ և հիւսնեալ իրք լսի որպէս և են բնակիչք գաւառին ազատք և ազատորդիք, ի գեղ գովելի և ի հասակ անձնեա զարգարեալք, ոչ կոպիտք և անտաշք, և փանաքիք ոչ միայն անդիւքն ազգաւ, այլ և ռամիկք և գեղջուկք, յոր և

Յովհաննէս յասել ի հոգեւոր և յիմանալի գեղեցկութիւն, հիւսնն ճարտար թեքեալ տապարով հանճարոյն:

Յովհաննէս ի յօձուն գեղջէ, որպէս և է հարթ հաւասար, անխոշոր և անխոր վայրն, հովիտ լայնական և ընդարձակ հասկարակ, իրրե օծեալ գեղով, և հաճոյ աչաց հայելոյ, են և ծնունդ տեղւոյն մարդ և անասուն բոլոր անդաստանաց իբրեւ, իւղեալք, օծեալք, և մարգեալք զորոյ զբանական զգաւական հոգեւոր իւղովն օծանէր, իբր զըմբիշս հանդիսաւորս ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն: Եւ կամ օձուն է որպէս և այժմ կոչի զի օձս ունի, թէպէտեւ հովէ տեղիքն, որպէս և յաւանդ զըւցածն ասին, թէ վիշապք երկու երեւցան անդ, եթէ յայրէ ուստեք, որ կան յանձաւսխրամին, և թէ այլ ուստեք եկեալ ապականէին զբազում տեղիս մինչ ի խնամեցն Աստուծոյ ածեալ լինէին առ ընթեր ճգնարանի սրբոյն ընդ զառ ի կող լերինն ահագին շաչմամբ սողելով, և սուրբն կայր ի խորհրդեան պատարագին, զոր տեսեալ մոնոզոսին աղաղակեաց առնա: Իսկ նորա խաչակնքեալ ընդդէմն զտեղիաւունուն, և մինչև ելեալ ի յարձակման պատարագին վիմատառեալ արձանացողցանէր զնոսա. կարծրակառոյց քարինս, որ կան և տեսանին մինչև ցայսօր ի ձեւ և ի գոյն օձի ի նշան փառացն Քրիստոսի և յիշատակ առն որբութեան:

Յովհաննէս ըստ անուան իւրոյ Տեառն հնազանդութիւն. անուանակիրն մեծի աւետարանչին, որ ոչ միայն անուանն հալորդ, այլ աստիճանին և Աստուածաբանութեան, և կուսածաղիկ մաքրութեան, նմանապէս ունելով բազմաց և փարելի զլանջն Յիսուսի, սիրելի նորին և որոտումն աշխարհի:

Յովհաննէս զինուորն Քրիստոսի և յաղթող սպառազէնն. կուռ վառեալ զօրութեամբ հոգւոյն, ոչ վայրապար ածելով զպոլովատիկն սուսեր, որպէս թէ զհողմս ինչ կոծելով, այլ ի յերեսս հակառակամարտին զկարեւորն խոցոտելով, յաջմէ և յահեկէ յերեսաց և ի թիկանց կռուելով դիմաւալ կացողցանէր զթշնամիսն, ամենայն ուստեք աչացեալ, ըստ լինգեա հրաշիցն, յաղագս որոյ և զբարեք պատերազմն պատերազմեալ, զընթացն կատարեալ, զհաւատն ուղափառութեան յինքն և ի հօտն իւր պահեալ, հանգեալ խաղաղութեամբ ի նմին անապատի, անեալ ի բարեք ծերութեան, ալեռ:

րեալ և լի աւուրբք. իբրև յողկոյզ հասուն ի հնձանն. և իբրև զցորեան մաքուր ի շտեմարան հաւաքեցաւ ի գերեզման մարմնով, իսկ հոգւովն ի հոգեղինաց դասուցն համբարձեալ առ տէրն տուող յաղթանակաց. խնդակցելով նմա բոլոր պարուն երկնից, ընդ յառաջ ընթացեալ և կացուցեալ զնա առաջի սրբոյ երրորդութեան ի հոտ անուշից, բարի պտուղ ի յԱզգէս հողեղինաց զոր և ընկալեալ տէրն գգուանօք ի գիրկս անճառելի գթութեանն տուեալ նմա զհարկւրաւորն պարգևս, Շտեմարանէ զնա ի լուսեղէն խորանի հաւուն իւրոյ Գրիգորի, մնալով աւուրն հատուցման, տալ նմա ընդ նմանիսն իւր զկեանսն յաւիտենականն և այնու կենօք անզրաւ ուրախութեամբ վայելել զպսակն փառաց. զոր և ակն և ականջ և սիրտ մարդոյ ոչ իմացաւ, զկազմեալն ի ձեռանէ Աստուծոյ ի յանմատչելի լուսոյն:

Իսկ շիրիմ յիշատակի նորա և ի նմա գանձեալ նշխարք ոսկերացն և աջն շնորհաբաշխ որ պահեցաւ ի տեսիլ և ի համբոյր կարօտեալ հօտին իւրոյ, ներգործէ զնոյն արուեստս և զնշանս կենդանութեան, կենդանի գոյով հոգւոյն Աստուծոյ յոսկերս նորա, ապաքինելով զպէսպէս ցաւս և զհիւանդութիւնս որոց ոչ գոյ թիւ. զի շինեցաւ յիտ ժամանակաց ինչ գեղ մի մերձ ի քնարսն նորա յուսով, որք և զնա ունին բժշկարան և տեղի պարծանաց, որպէս և իւր սեպհական աւանն Ուձուն, եւ են վանք սքանչելեացն որ առ յինքեանս և առ այլս որք տան հանապազորդ երախայրիս պատարագաց ի տեղւոջն, և գտանեն զմեծ զողորմութիւն Աստուծոյ բոլոր գաւառաւն և բազում և ս հեռաւորք, որում և դուք լինիցիք բիւրաւոր բարեացն Յովհաննու սրժանաւորք, և պսակաց նորին տեսողք և վայելողք յանզրաւ յաւիտեան:

Տէրգ արիական Համազասպ և հոյակապ սուրբ ուխտդ Հաղբատայ և բոլոր լրումն մեծի և փոքու Հայաստանեայցս եկեղեցւոյ, որոց շնորհաւոր շահեկան շահաւետ և լի բարի պտուղ զիպեսցի ձեզ դրուատ նորակերտ բանիս: Եւ մեզ ընդ ձեզ լիցի ողորմութիւն գտանել ի տեառնէ և զոր ինչ սխալեցորէն քաւութիւն:

Եւ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն փառք և օրհնութիւն գահութիւն և պատիւ յերիս երեւմունս ի միում բնութեան և

Առտուածութեան յաւիտեանս և յաւիտենից յաւիտեանս:

Քրիստոս Առտուած, բարեխօսութեամբ սրբոյն Յովհաննու մեծի Հայրապետին ողորմեա ամենայն հաւատացելոց սրբոց:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՐԱԿՈՒԱՑ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

(Շ-ր-ն-է-թի-ն)

Գ. Մկնակների համակարգութեան գիտողութեան անցնելը տալիս է մեզ պատեհ գիպուած մի կողմ թողնելու առանձին հիւանդութիւնների գաւառը, ուր մինչեւ այժմ մենք պտտում էինք, և անցնել հիւանդութիւնների ընդհանուր վարդապետութեանը: Եթէ մինչեւ այժմ մենք գլխաւորապէս պնդում էինք կտրուկ կերպով արտայայտուած նշանակների վերայ՝ ինչպէս են սրտի արատները, արիւն ժայթքելը, բարակացաւը ու վնասկան հանգոյցները ևլն. իսկ այժմ, ընդհանրապէս գիտելով, մենք կոտենենք այս բոլոր դէպքերում այսպէս ասած՝ երկրորդ աստիճանը: Իսկ իբրեւ առաջին աստիճան յերեւան են գալիս այնպիսի գրութիւններ, որ աւելի պակաս արտայայտուած նշանակների՝ և միայն ընդհանուր տկարութեան աւելի կամ նուազ աղօտ զգացողութեան ընաւորութիւն ունին: Հասարակաց բարեառով՝ մերոնք իւրեանց լիճակը նկարագրում են հետեւեալ բառերով՝ «ոչ մի բանի պէտք չեմ», միւսերը «բոլորովին խախտուեցայ» ևլն: Այսպիսի անձերը, հազիւ թէ վերադառնում են աշխատանքից, ընկնում են անկողին և մնում են անշարժ պառկած որքան հանգամանքները թոյլ են տալիս: Երբ նոքա վերստին վեր են թռչում տեղից աշխատանքի գնալու՝ նոքա թարմացած չեն զգում իւրեանց հանգստութիւնից, նոքա նման են աւելի փչացած կամ հնացած մեքենաների և դառնում են աշխատանքին առանց կորուրի՝ հակառակ ցանկութեան ու յօժարութեան: Այսպիսի